

ՏԱՆՅԱՅԱՅԻ.

Քանի ու ես ինձ չէի հասկացել
Դեռ մանուկ էի ուրախ ու զուարթ
Տան ընտանիքի դարտ ու հոգս քաշել
Աւառ աշխոյժ էի, գեմքս կարմիր վարդ:

Պատուած շորեր իմ բոկոտն լինել
Հեշ արգելք չէին իմ ուրախութեան.
Աւազվրզումէի խաղում զուարճանում
Նոյն աշխոյժութեամբ տուն վերադառնում:

Փորս կուշալ լինէր թէկուզ չոր հացով
Դրա համար էլ ես չէի մտածում
Հարստի որդւոց պաճուճանիքներով
Ես, երբէք, երբէք չէի հրապուրվում:

Ճէի էլ մտածում թէ հայրս ինչո՞վ
Մեր ընտանիքի կարիքը հոգում
Որ ամրող տարին դառն աշխատանիքով
Պահել իւր տունը հազիւ կարենում:

Տարիքս հասան, չափահաս դարձայ,
Ընտանիքի հոգսն. ինչ էր՝ հասկացայ,
Անցան մանկութեան ուրախ, զուարթ օրեր
Ծանրացան կրծքիս տան դարտն ու հոգսեր:

Հայրս ուժից ընկած, Մայրս պառաւած,
Փոքր երեխանցով ես շրջապատուած,
Տանջվումեմ, տանջվում ամրող ամիսներ
Զեմ կարողանում ծէր ծէրի հասցնել:

Քսան հինգ տարեկան առօյգ հասկում
Ճնշուած բեռի տակ, դառն քրտինք թափում,
Օրէցօր ուժս սպառվում թուլանում,
Էպրուստի մի դուռ գտնել չեմ կարում:

Ծնուեցի թշուառ ու մնայ աշխարհ
Նոյն թշուառութեամբ կերթամ գերեզման
Ճիշդ հանգստութիւն, այն տեղ է միայն
Այն տեղ չի տանջիլ անդութ պարտապան: